

**Մզիա Օերերթի**

Իվանե Ջավախիշվիլիի անվան Թբիլիսիի պետական համալսարան

**Կախա Գարունիա**

Քաղաքացիական ինտեգրման և ազգամիջյան փոխհարաբերությունների կենտրոն

**ԲԱԿՈՒՐԻԱՆԻ ՎԱՐԺԱՆՔ-ՍԵՄԻՆԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

**ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ**

*Հողվածը հանդիսանում է 2011 թվականի հոկտեմբերի 1-3-ին Ջավախքի և Քվեմո Քարթլիի տարածաշրջանների երկլեզու կրթության վարժող-ուսուցիչների համար հատուկ անցկացված վարժանք-սեմինարների դասընթացի հաշվետվությունը: Վարժանքի նպատակն այն էր, որ մասնակիցները ծանոթանային ընդհանրապես գնահատման և մասնավորապես լեզվի յուրացման և տիրապետման համակարգերին, յուրացնեին հիմնական մեթոդաբանական մոտեցումները և ստանային գործնական փորձ դասարանական թեստերի կազմման համար:*

*Վարժանքի հետևանքով հստակեցվեց մասնակիցների մեծ հետաքրքրությունը լեզվի գնահատման տեսական և փորձնական հարցերի նկատմամբ, բացահայտվեցին այն հիմնական անհրաժեշտությունները և հիմնախնդիրները, որ ունեն նրանք լեզվի տիրապետման գնահատման անցկացման թե ուսուցիչներին ուսուցանելու ընթացքում: Ընդգծվեց նաև այսպիսի վարժանք-սեմինարների հետագա, ավելի խորացված դասընթացների անցկացման անհրաժեշտությունը:*

2011 թվականի հոկտեմբերի 1-3-ին անցկացվեց հատուկ վարժանք-սեմինարների դասընթաց Բակուրիանի ավանում: Վարժանքի մասնակիցները Ջավախքի և Քվեմո Քարթլիի տարածաշրջանի երկլեզու կրթության վարժող-ուսուցիչներն էին: Վարժանքն անցկացվեց Եվրամիության «Ազգային փոքրամասնությունների կրթական իրավունքների պաշտպանությունը երկլեզու կրթության միջոցով» նախագծի շրջանակներում:

Վարժանքի նպատակն էր մասնակիցներին ծանոթացնել գնահատման համակարգերը և դրա նշանակությունը լեզվի յուրացման ուսումնական գործընթացում, նաև տեսականորեն ծանոթացնել թեստի ստեղծման հիմունքներին, որպեսզի նրանք ստանային գործնական փորձ դասարանական թեստերի կազմման համար:

Վարժանքը տևեց երեք օր և ընդգրկում էր ինչպես հարցի շուրջ առկա նորագույն գիտական մոտեցումների վերլուծություններ և շնորհանդեսներ, այնպես էլ գործնական ակտիվություններ, խմբային քննարկումներ և բանավեճեր:

Վարժանքի առաջին փուլում մասնակիցներին ծանոթացրինք գնահատման էությունը և նրա կարևորությունը լեզվի ուսուցման գործընթացում: Մասնավորապես, քննարկվել են հետևյալ հարցերը.

- բազմալեզու հասարակության գնահատումը,
- երկլեզվության (բազմալեզվության) գնահատումը,
- երկլեզու կրթության ծրագրերի գնահատումը,
- լեզվի տիրապետման մակարդակների գնահատումը կրթության մեջ (լեզվի գնահատումը դասարանում,

դինամիկ գնահատում, լեզվի գնահատման մշակույթը, երկրորդ լեզվի գնահատումը բազմապիսի բնակչության մեջ, տեղային լեզվի ծրագրերի գնահատումը, համաձայնության սկզբունքի կիրառությունը գնահատման ժամանակ):

Մասնակիցների փորձում առկա գնահատումների օրինակների վրա հիմնվելով՝ սահմանեցինք հիմնական տերմինները, ինչպիսիք են՝ գնահատման նպատակները, խնդիրները, առարկան, տեսակները, տեսքը և ձևը:

Հատուկ խմբային բանավեճը նվիրվեց գնահատման տարբեր հասկացություններին և մեկնաբանություններին: Մասնավորապես, մասնակիցների հետ վերլուծվեցին այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են չափելը (Measurement), դասարանական գնահատումը (classroom Assessment), լայնածավալ գնահատումը (large scale Assessment), ծրագրի, նախագծի գնահատումը (Evaluation) և մշադիտարկումը:

Մասնակիցների մեծ հետաքրքրություն հարուցեցին լեզվի յուրացման / լեզվի տիրապետման գնահատման այնպիսի հարցեր, ինչպիսիք են **լեզվի տիրապետման մակարդակի գնահատում՝ չափանիշների հետ հարաբերության մեջ, խոստողական գործողության գնահատում, լեզվական իրազեկության (իմացության) գնահատում, լեզվի տիրապետման մակարդակների համեմատական համակարգը, նաև լեզվի տիրապետման համեմատական համակարգը, որպես գնահատման գործիք և վրացերենի, որպես օտար լեզվի տիրապետման մակարդակների գոյություն ունեցած չափորոշի կառուցվածքը:**

Խմբում քննարկվեցին գնահատման մեթոդաբանական հիմունքները և մեթոդները, նաև՝ թեստի ստեղծման փուլերը, թեստի հիմնական չափումները (համապատասխանությունը, վստահելիությունը և արդարացիությունը)

և թեստային առաջադրանքների տեսակները:

Առանձնահատուկ ուշադրության արժանացավ նորմային և չափանիշին կողմնորոշված գնահատումը, դրանց կիրառության օրինակների քննարկումը: Խմբում հատուկ քննարկվեց թեստավորման արդյունքների կարևորությունը երկրորդ լեզվի ուսուցման գործընթացում, դրանց կիրառության տարածքը: Քննարկվեցին լսելու, կարդալու, բառապաշարի, քերականության և գրելու չափման թեստային առաջադրանքների նմուշներ:

Վարժանքի կարևորագույն փուլերից էին գործնական աշխատանքները: Մասնավորապես, խմբերում և զույգերում աշխատելու մեթոդների կիրառությամբ մասնակիցների կողմից վերլուծվեցին թեստային առաջադրանքները, սահմանվեց որպես նմուշ տրված թեստի վստահելիությունը:

Վարժանքի վերջում մասնակիցները կատարեցին ինքնուրույն խմբային աշխատանք, տրված տեքստի և լեզվի տիրապետման սահմանված մակարդակի գնահատման համար կազմած թեստային առաջադրանքներ: Յուրաքանչյուր խմբի աշխատանք ներկայացվում էր ամբողջ խմբին: Շնորհանդեսի ժամանակ քննադատորեն էր ներկայացված թեստային առաջադրանքների որակը, դրանց համապատասխանությունը լեզվի տիրապետման մակարդակին, գնահատվեց ստուգիչների գործունակությունը, բաց թեստային առաջադրանքների գնահատման աղյուսակների համապատասխանությունը/ ամբողջականությունը և այլ պարամետրեր:

Վարժանքը մասնակիցների մեծ հետաքրքրություն հարուցեց, ինչի հավաստումը նրանց բարձր մակարդակի ընդգրկվածությունն էր, ակտիվությունը և կենդանի բանավեճը: Մասնակիցների նշմամբ, քննարկված հարցերի հետ նրանք շփում էին ունենում նաև ուսումնական գործընթացի ժամանակ և գիտելիքի և փորձի սակավության (կամ էլ դրա բացակայության) պատճառով, մինչև օրս նրանք մի շարք խնդիրներ վճռում էին

միայն ներըմոնոդոլոգիայի հիման վրա: Վարժանքների ժամանակ ձեռք բերած գիտելիքը և գործնական փորձը կօգնի նրանց լավ պլանավորել գնահատման գործընթացը և համապատասխանաբար կիրառել նրա արդյունքները լեզվի ուսուցման գործընթացում: Առանձնահատուկ հետաքրքրություն առաջացրին թեստի ստեղծման, թեստի արդյունքների մեկնաբանման տեսական և գործնական հարցերը:

Վարժանքի հետևանքով ընդգծվեցին այն հիմնական անհրաժեշտությունները և հիմնախնդիրները, որ այս մարդիկ ունեն լեզվի ուսուցման/մակարդակի գնահատման բնագավառում: Սրանք են՝ թեմային կողմնորոշված հատուկ գրականության պակաս, թեստի ստեղծման

փուլերի հետագա ուսուցման անհրաժեշտություն, թեստային առաջադրանքների գնահատման (միավորներ նշանակելու, գնահատման աղյուսակների, գծապատկերների) սկզբունքների և թեստի կազմման գործնական փորձի պակաս և այլն:

Մասնակիցները ցանկություն հայտնեցին ավելի խորը տիրապետել այս հարցերին: Ըստ նրանց, լեզվի ուսուցման որակի բարելավման համար ցանկալի կլինի անցկացնել լեզվի տիրապետման գնահատման հետագա վարժանքներ, որոնց ժամանակ նրանց հնարավորություն կտրվի այս բնագավառում ավելի խորը գիտելիք ստանալ, նաև կոնկրետ վերլուծել գործնական աշխատանքի հետևանքով կուտակված հիմնախնդիրները:

**Mzia Tsereteli**  
**Kakha Gabunia**

## **Report on training seminars held in Bakuriani**

### **ABSTRACT**

Presented paper is a report on training-seminars held in 01-03 October 2001. The purpose of this training was to get acquainted with general assessment and specifically, with language acquisition and its assessment systems. Participants would also acquire main methodological approaches and practical experience in school test development.

The training results revealed interest in theoretical and practical aspects of language assessment, as well as various problems in the process language possession assessment in school setting. Further need for such training-seminars and deeper courses in this sphere was also exposed.